ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

12-ը օգոստոսի 2025թ. կնքված N **ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-25/13** պետական գնման պայմանագրի

ք. Իջևան *„22„ ապրիլի 2026թ.*

«*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ-Ը*», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատակազմ**-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.03.2026թ. թիվ 370-Ն որոշումը և 12.08. 2025թ. կնքված N **ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-25/13** պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Վճարման ժամանակացույցը, վճարման կարգը

1.1 Սույն համաձայնագրով Պատվիրատուի կողմից ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 1 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան, ընդորում սույն համաձայնագրով հատկացվում է Պայմանագրի գնի մնացյալ երեսուն տոկոսի չափով ֆինանսավորում՝ ընդհանուր 814300 /Ութ հարյուր տասնչորս հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, որից ***որից 1-ին չափաբաժինը՝ Կիրանցի ոռոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության արժեք՝ 526200 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին՝ Կիրանցի խմելու ջրագծի աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության արժեքը՝ 288100 ՀՀ դրամ:***

1.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 2026թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ, շինարարական աշխատանքներին զուգահեռ: Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառման անցնելուց հետո:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրով մատուցվող ծառայությունն իրականացվելու է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի և Խաչմիշշին ՍՊԸ-ի միջև կնքված 02.05.2025թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱԾՁԲ-25/02-1 պայմանագրի թիվ 1 համաձայնագրով ամրագրված աշխատանքների և Արտ Պլաս ՍՊԸ-ի միջև կնքված 02.05.2025թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱԾՁԲ-25/02-2 պայմանագրի թիվ 1 համաձայնագրով ամրագրված աշխատանքների համար (նշված պայմանագրերի և համաձայնագրերի պատճենները պայմանագրի կողմին ներկայացվում է էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով):

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
07628257
900371002917
Արման Գևորգյան

/ստորագրություն/
Կ. Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատակազմը
Հ/Հ 1510001964940200
ՀԿՀՀ 01506385
Փ. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
<< 12 >> օգոստոս 2025թ.
Կնքված թիվ << ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-25/13>> գնման պայմանագրի
փոփոխության N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140-2	Հեղինակային հսկողության ծառայություններ	-	-	-	526200	526200	526200	526200	526200	526200	526200	526200	526200	526200
1	98111140-3	Հեղինակային հսկողության ծառայություններ	-	-	-	288100	288100	288100	288100	288100	288100	288100	288100	288100	288100
Ընդամենը						814300	814300	814300	814300	814300	814300	814300	814300	814300	814300

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ ՎԱՐՉ
07628257
900371002917
Արման Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատակազմը
Հ/Հ 1510001964940200
ՀՎՀՀ 01506385
Փ. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.